

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վարդուհի Գազիկի Միրիջանյան

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ- ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆ. Գ.Հ. Մուրադյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆ. Ա.Տ. Կնյազյան
բ.գ.թ., պրոֆ. Ա.Է. Չուբարյան

Առաջատար
կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. նոյեմբերի 26-ին
ժամը 12.30-ին Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար
լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Մեղմագիրն առաքվել է 2025թ. հոկտեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Իրավական **փաստաթղթերը** կարևոր հասարակական նշանակություն ունեցող փաստաթղթեր են, որոնց դերն ու նպատակը հասարակական, անհատական և միջպետական հարաբերությունները կարգավորելու միտումն է: Քանի որ իրավական հարաբերությունները բացառում են տարընթեցումները, երկխոսությունն ու երկակի մեկնաբանությունները՝ իրավական փաստաթղթերը պետք է լինեն հնարավորինս ճշգրիտ: Այս առումով հատուկ ուշադրություն է դարձվում դրանց լեզվական ձևակերպումներին՝ պահպանելով տվյալ լեզվին բնորոշ իմաստային, ձևաբանական, շարահյուսական, կառուցվածքային և, լայն առումով, ոճագործառական յուրահատկությունները:

Իրավաբանական խոսույթը կառուցվում է լեզվի և իրավունքի փոխհարաբերման, փոխազդման հիմքի վրա՝ պարունակելով օրենքի հետ ուղղակիորեն առնչվող տարրեր և դառնալով լեզվաիրավագիտության ոլորտի ուսումնասիրության առարկա: Սա նշանակում է, որ իրավաբանական խոսույթի տարատեսակ գործառական դրսևորումների հետազոտությունն առավել արդյունավետ է, երբ նյութը դիտարկվում է լեզվաիրավագիտության դիրքերից:

Իրավաբանական խոսույթի ինքնատիպ դրսևորում համարվող պաշտոնական փաստաթղթերի լեզուն խստորեն առնչվում է իրավունքի ոլորտին: Մի կողմից այն իրավաբանական խոսույթի գործառական տարատեսակ է, մյուս կողմից՝ պաշտոնական-գործարար ոճին հարող խոսքային դրսևորում: Հենց այս երկբևեռությունն էլ պայմանավորում է իրավական փաստաթղթերի գործառական-հաղորդակցական առանձնահատուկ բնույթն ու կառուցվածքը լեզվական արտահայտման բոլոր մակարդակներում:

Առանձնակի կարևորություն ունի նաև իրավական փաստաթղթերի թարգմանությունը, որն, անկասկած հեշտ գործընթաց չէ, քանի որ թարգմանիչը պետք է լավագույնս տիրապետի ոչ միայն սկզբնաղբյուր և թիրախ լեզուներին, այլև ծանոթ լինի նաև իրավաբանական խոսույթին բնորոշ բառապաշարի, եզրույթների, հնաբանությունների, հապավումների, տարբեր կառույցների և վերջիններիս գործառական կիրառությամբ պայմանավորված այլ միավորների թարգմանական ներբերություններին:

Այսպիսով, սույն ատենախոսության ուսումնասիրության **ուլորտը** իրավաբանական խոսույթն է, որը լեզվի համակարգում հանդես է գալիս որպես գիտական ոճի գործառական դրսևորում՝ իր հաղորդակցական նպատակներին և գործառույթներին բնորոշ լեզվական տարրերի համալիր ամբողջությամբ: Ուրիշ խոսքով, ուսումնասիրության ոլորտը ներկայացնող իրավաբանական խոսույթը մի համակարգ է, որոշակի տիրույթում գործող մասնագիտական մի համակարգ, որի տարրերը սերտորեն հարաբերակցվում են մեկ ընդհանուր հաղորդակցական-տեղեկատվական գործառույթի սահմաններում:

Հետազոտության **առարկան** իրավական փաստաթղթերն են, հատկապես անգլերեն միջազգային պայմանագրերը՝ հայերեն տարբերակների հետ զուգադիր համեմատությամբ, թարգմանական խնդիրների պարզաբանմամբ, լեզվական և արտալեզվական այնպիսի փաստերի և կառույցների վերհանմամբ, որոնք նպաստում են նշված գործառական տարատեսակի լիարժեք կայացմանը: Վերջինս պայմանավորված է նաև իրավական փաստաթղթերում պաշտոնական-գործարար

ոճին հարող տարրերի և կառույցների առկայությամբ և ճիշտ կիրառությամբ: Իրավական փաստաթղթային խոսույթում լեզվական տարրերի կապն օժտված է իմաստային, գործառական-հաղորդակցական նպատակաուղղվածությամբ՝ ներկայացնելով ներլեզվականի և արտալեզվականի միասնություն, որի քննությունը ենթադրում է լեզվական միավորների այն բոլոր փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների ուսումնասիրություն, որոնք իրականանում են հաղորդակցական հիմքի վրա և նպաստում թարգմանական խնդիրների ճիշտ լուծմանը:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից աշխարհում ներպետական և միջազգային հարաբերությունները կարգավորող պաշտոնական փաստաթղթերի հանրության կյանքում կատարած կարևորագույն դերով: Այդ հարաբերություններն այսօր ավելի բարդ են քան երբևէ՝ հատկապես հայ իրականության մեջ: Հատկանշական է, որ կազմակերպությունների և պետությունների միջև ճիշտ հարաբերություններ պահպանելու առումով միջազգային իրավունքը կարգավորող գործոն է, հետևաբար միջազգային հաղորդակցությունը պահանջում է միայն ճշգրիտ փաստաթղթեր և այդպիսի փաստաթղթերի ճշգրիտ թարգմանություն: Այս առումով, լեզվաիրավագիտության ոլորտի ուսումնասիրություններն ու իրավական փաստաթղթերի քննությունը առավել արդիական են հայ հանրային կյանքում, որտեղ իրավական փաստերի ճշգրիտ ներկայացումը և դրանց գրագետ թարգմանությունը էականորեն նպաստում են օրենքի գերակայության պահպանմանն ու իրավական համակարգերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Ատենախոսության գիտական **նորույթը** իրավական փաստաթղթերում/պայմանագրերում առկա լեզվական միավորների՝ եզրույթների, հապավումների, բառերի, բառակապակցությունների, շարահյուսական միավորների ճիշտ ընկալումն է և դրանց համարժեք ճշգրիտ թարգմանությունը ոչ միայն լեզվական առանձնահատկությունների, այլև արտալեզվական համատեքստի հաշվառմամբ: Բացի այդ, իրավական փաստաթղթերը լեզվական արտահայտման բոլոր մակարդակներում որպես իրավաբանական և պաշտոնական խոսքի միասնության վրա հիմնված գործառական տարատեսակ վերլուծելու փորձը նոր է, բարդ և խոստումնալից:

Ատենախոսության մեջ հետազոտված **փաստական նյութն** (ավելի քան 1000 էջ) ընդգրկում է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի անգլերեն և հայերեն տարբերակներ, որոնք ներկայացնում են իրավական փաստաթղթերին բնորոշ լեզվական և արտալեզվական առանձնահատկություններ: Վերլուծվող փաստական նյութը հիմնականում ՀՀ կողմից վավերացված կամ կնքված միջազգային պայմանագրեր են, ինչպիսիք են, օրինակ, *Council of Europe Convention on Access to Official Documents – Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան*; *United Nations Convention on Contracts for the International Sale of Goods – Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված Ազգերի Գազմակերպության կոնվենցիա*; *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms – Կոնվենցիա*

մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության և այլ պայմանագրեր, որոնց միացել և վավերացրել է Հայաստանի հանրապետությունը:

Որպես փաստական նյութի վերլուծության արդյունավետ **մեթոդներ** կիրառվել են վերլուծական հետազոտության մեթոդը, որակական և քանակական վերլուծության մեթոդները, լեզվաոճական վերլուծության մեթոդը, կորպուսային վերլուծության մեթոդը (AntConc կորպուս գործիքի միջոցով) և համեմատական իրավիճակային-փաստարկային քննության մեթոդը: Վերջինիս շրջանակներում կիրառվել են նաև իմաստաբանական և կառուցվածքային հետազոտության մեթոդները:

Ճիշտ մեթոդաբանության ընտրությունը սկզբունքային կարևորություն ունի և հնարավորություն է տալիս իրականացնելու սույն հետազոտության **նպատակը**՝ լեզվաիրավագիտության շրջանակներում ուսումնասիրել, պարզաբանել և բացահայտել իրավական փաստաթղթերի, հատկապես պայմանագրերի ոճագործառական և թարգմանական առանձնահատկությունները խոսքային բարդ ու բազմազան համակարգում, քննել դրանցում կիրառվող ոճատարբերակիչ լեզվական միավորները (նշույթները)՝ լայն առումով փաստելով, որ լեզուն իրավաբանական խոսույթի օրինաստեղծ հիմքն է:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Տարրորշել օրենսդրական/իրավական պաշտոնական փաստաթղթերի տեղն ու դերը գործառական ոճերի համակարգում՝ դիտարկելով փաստաթղթերի լեզուն որպես գիտական/իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթների միասնություն:

3. Բացահայտել նշված խոսույթների թարգմանական խնդիրներն ու գործառական-հաղորդակցական յուրահատկությունները:

4. Քննել և համեմատել բառերի և եզրույթների իմաստային առանձնահատկությունները իրավական պաշտոնական փաստաթղթերում և դրանց հայերեն թարգմանություններում:

5. Համեմատական վերլուծության ենթարկել շարահյուսական բարդությունները (նախադասություն, դերբայական և կրավորական կառույցներ) միննույն իրավական փաստաթղթի/պայմանագրի անգլերեն և հայերեն տարբերակներում՝ դրանց ոճագործառական կիրառության յուրօրինակ բնույթը, թերություններն ու դրական կողմերը վերհանելու համար:

6. Կատարել փոքրածավալ կորպուսային հետազոտություն՝ դիտարկելով հապավումների համարժեք կիրառությունը միջազգային պայմանագրի անգլերեն և հայերեն տարբերակներում:

Հետազոտության մեջ քննարկվող տեսական դրույթները հիմնված են տարբեր լեզվաբանական դպրոցների և լեզվաբանների, իրավաբանական խոսույթի վերլուծաբանների՝ սույն ուսումնասիրության համար էական կարևորություն ունեցող դրույթների ու սկզբունքների, մեթոդների ու մոտեցումների վրա: Տեսական այսպիսի հիմքը մեծապես նպաստում է ոլորտի հետագա ընդլայնմանն ու զարգացմանը, նոր գաղափարների ու տեսությունների, նյութի քննության նոր մեթոդների ու ձևերի ներմուծմանը: Հենց այս մոտեցմամբ էլ պայմանավորված է մեր հետազոտության **տեսական արժեքը**՝ իրավական փաստաթղթերի լեզվական, արտալեզվական, ոճագործառական, թարգմանական, հաղորդակցական

առանձնահատկությունների ուսումնասիրությունը, իրավական փաստաթղթերի՝ որպես որոշակի օրենքներով կանոնակարգվող խոսույթային գործընթացի դիտարկումը:

Այսօր իրավական փաստաթղթերի լեզուն և ոճը հետաքրքիր են ոչ միայն լեզվաբանների, իրավաբանների և թարգմանիչների, այլև ընդհանրապես տվյալ խոսույթով հետաքրքրվող այլ մասնագետների և լայն հանրության համար, քանի որ ժամանակակից աշխարհում միջազգային շփումն իրավական ոլորտում անգլերենի միջոցով անխուսափելի է, առանց անգլերենի՝ անհնարին, և այս առումով սույն հետազոտությունը կարող է ունենալ որոշակի **գործնական արժեք**, արդյունավետ կիրառություն գտնելով լեզվաիրավագիտության, լեզվի մշակույթի, հաղորդակցության տեսության և գործառական ոճագիտության բնագավառի բազմաբնույթ հետազոտական աշխատանքներում և անգլերենի գործնական ուսուցման ոլորտում: Ժամանակակից հայ իրավաբանական խոսույթը (ներառյալ միջազգային փաստաթղթերը) դեռևս զարգացման փուլում է, և այս առումով մեր միջգիտակարգային հետազոտությունը միտված է ծառայելու դրա հետագա ուսումնասիրության խթանմանը, ինչպես նաև ապագա մասնագետների համար իրավունքի և փաստաթղթերի/պայմանագրերի լեզվի և, որը նույնպես շատ կարևոր է, դրանց հայերեն թարգմանության դասավանդման ծրագրի մշակմանը: Այլ խոսքով՝ մշակված սկզբունքները կարող են նպաստել ոչ միայն անգլերեն և հայերեն իրավաբանական խոսույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, այլև այդ ոլորտում թարգմանության գործընթացի հաջող զարգացմանը:

Ատենախոսությունը **բաղկացած է** ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթազույններով և ծանոթագրություններով, եզրակացությունից, գրականության ցանկից և հապավումների՝ AntConc թարգմանական գործիքի կիրառմամբ կատարված կորպուս հետազոտության արդյունքները պարունակող հավելվածից:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացել են իրավական փաստաթղթերի ուսումնասիրության հետ կապված հիմնահարցերն ու խնդիրները, հիմնավորվել թեմայի և փաստական նյութի ընտրությունը, ուսումնասիրության ոլորտը, առարկան, արդիականությունը և նորույթը, մեթոդաբանական հիմքը, գործնական նշանակությունն ու տեսական արժեքը, որոշարկվել են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Ստացին գլխում (*Իրավաբանական խոսույթը գործառական ոճերի համակարգում*) անդրադարձ է կատարվում խոսքի գործառական դասակարգմանը, իրավաբանական և պաշտոնական խոսույթներին, հանրության և պետության գործունեությունն ապահովող ու կառավարող իրավական փաստաթղթերի լեզվի գործառական համակարգում գրաված տեղին և դերին: Նշվում է, որ գիտական ոճի հումանիտար ենթաոճին պատկանող իրավաբանական խոսույթը, ինչպես նաև պաշտոնական-գործարար խոսույթը բաժանվում են ոճագործառական հաղորդակցական տարատեսակների, որոնցից մեկն էլ իրավական փաստաթղթերն են,¹ որոնց լեզուն իրավաբանի և թարգմանչի միակ «աշխատանքային գործիքն է»,

¹ Розенталь, Д. Э. (1987). *Практическая стилистика русского языка*. Москва: Высшая школа.

գործիք, որը պետք է լավ հարմարեցվի «աշխատանքային նյութի»՝ իրավաբանական խոսույթի և իրավահարաբերությունների համակարգի հետ աշխատելուն և դրա գործունեությունն ապահովելուն:¹

Այս գլխում կարևորվում են նաև բառիմաստի, եզրույթների, հապավումների, համառոտագրությունների, բառակրկնությունների բազմաբաղադրիչ կապակցությունների, ձևաբանական կոնկրետ նորմերի՝ հոլովման, խոնարհման, հոգնակիության կանոնարկված տարբերակների, շարահյուսական կառույցների, հատկապես պատճառի, հետևանքի, հիմունքի, նպատակի պարագա երկրորդական նախադասությունների, հոմանշային կառույցների դերը և դրանց թարգմանական առանձնահատկությունները: Այսպես, օրինակ իրավական փաստաթղթային խոսույթը ներառում է ոչ միայն **բուն իրավաբանական եզրույթներ** (*evaluation of the evidence–ապացույցների գնահատում, in maximum favour–առավելագույն բարենպաստում, confiscation–առգրավում, residency–բնակեցատարություն, litigation–դատավեճ, prescription of law–իրավունքի ռեցեպտիս*), այլև եզրույթային նշանակությամբ հանդես եկող տարբեր կառույցների **համագործածական բառեր և բառակապակցություններ** (*parties to the contract–պայմանագրի կողմեր, negligence–անփութություն, damage to property–վնաս սեփականությանը, access to official documents–պաշտոնական փաստաթղթերի մատչելիություն, the implemented adoption–կատարված որդեգրում*), օտար լեզուներից, հիմնականում անգլերենից **փոխառված բառային միավորներ և նորաբանություններ** (*obligative–օրլիգատիվ, abstinence–աբստինենցիա–abstinence, remission–ռեմիսիսիա, consignment–կոնսիգնացիա, fiscalization–ֆիսկալիզացիա, franchizing–ֆրանչայզինգ*), հայերենի բառակազմական միջոցներով ստեղծած **նոր եզրույթներ** (*clarifier–պարզաբար, incompetence–անիրավունակություն, illegality–հակաիրավականություն, public danger–հանրապետական*): Գործածական են օտար բառակազմական հիմքով և ածանցումով կազմված **բաղադրված եզրույթները**՝ *ակտուար+ային, բարտեք+ային, դերիտոր+ական, կոլեզիալ+ություն*, որոնք արդեն տեղ են գտել ժամանակակից իրավաբանական բառարաններում և նկատելի թարմություն են հաղորդում իրավական փաստաթղթերին: Օրինակ, օրենքի ուժ ստացած *Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ կոնվենցիա (2010)* – *United Nations Convention on Contracts for the International Sale of Goods (2010)* պաշտոնական փաստաթղթում ոճատարբերակիչ դեր են կատարում իմաստային մակարդակում իրացվող լեզվական միավորներն և եզրույթները:

Article 93

(1) If a **Contracting State** has two or more territorial units in which, according to its **constitution**, different **systems of law** are applicable in relation to the matters dealt with in this **Convention**, it may, at the time of **signature, ratification, acceptance, approval or accession**, declare that this **Convention** is to extend to all its territorial units or only to one

¹Arntz, R. (2001). *Fachbezogene Mehrsprachigkeit in Recht and Technik*. Hildesheim, Zürich, New York: Georg Olms Verlag.

or more of them, and may **amend its declaration** by **submitting another declaration** at any time.

Հոդված 93

1. Եթե **Պայմանավորվող պետությունն** ունի երկու կամ ավելի տարածքային միավորներ, որտեղ իր **սահմանադրությանը** համապատասխան կիրառվում են սույն **Գոնվենցիայի** կարգավորման առարկա հանդիսացող հարցերի վերաբերյալ տարբեր **իրավական համակարգեր**, նա կարող է **ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման** կամ **միանալու** պահին հայտարարել, որ սույն **Գոնվենցիան** տարածվում է իր բոլոր տարածքային միավորների վրա, կամ դրանցից միայն մեկի կամ մի քանիսի վրա և կարող է **փոխել** իր **հայտարարությունը** ցանկացած ժամանակ այլ **հայտարարություն ներկայացնելու** միջոցով:


Համատեքստերը ներկայանում են որպես վերասույթային միասնությամբ՝ ստորադասական նախադասությամբ և շարահյուսական գուգահեռականությամբ հանդես եկող բարդ կառույցով, որում պահպանված են իրավական և պաշտոնական խոսույթներին բնորոշ բոլոր լեզվական նորմերը: Գործածված եզրույթների և եզրույթային կապակցությունների (*Contracting State–Պայմանավորվող պետություն, constitution–սահմանադրություն, systems of law–իրավական համակարգեր, Convention–Գոնվենցիա, signature–ստորագրում, ratification–վավերացում, acceptance–ընդունում, approval–հաստատում, accession–միանցում, amend–փոխել, declaration–հայտարարություն, to extend submitting declaration–հայտարարություն ներկայացնել*) առատությունը վկայում է, որ գործ ունենք բացառապես իմաստային մակարդակում իրացվող հաղորդակցական խոսքանմուշի հետ: Ընդ որում, եզրույթները առանցքային գործառական-հաղորդակցական դեր են կատարում փաստաթղթի և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակներում: Փաստաթղթում գործածված մնացած բոլոր միավորները՝ *territorial units–տարածքային միավորներ, applicable–կիրառվում են* և այլն, իրավաբանական խոսույթին բնորոշ, խոսքի իմաստային մակարդակում իրացվող լեզվական միավորներ են:

Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է: Սա նշանակում է, որ կյանքի բոլոր ոլորտներում առկա է իրավունքի դաշտը՝ օրենքով և նորմատիվ իրավական ակտերով արտահայտված: Մեծ է ակտում ամրագրված նորմի ճիշտ ներկայացման կարևորությունը, քանի որ այն ուղղված է առաջին հերթին հանրությանը, որը ոչ միայն պետք է իմանա նորմը, այլև ընկալի օրենքն ու դրա փաստաթղթային ձևակերպումը: Դեռևս 2002թ.-ին ընդունած «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (36-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանում է, որ իրավական ակտերի լեզուն պետք է լինի ճշգրիտ, հստակ և մատչելի: Այն պետք է հնարավորինս հասկանալի լինի ոչ միայն իրավաբանի և թարգմանչի, այլև սովորական քաղաքացու համար: Հետևաբար, իրավական փաստաթղթերում կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը,

փաստերը, փաստարկումները և ձևավորումը, այլև շարադրելու մշակույթը, լեզվական անհրաժեշտ միջոցների ու ձևերի նպատակային ընտրությունը:¹

Երկրորդ գլուխում (*Իրավական պաշտոնական փաստաթղթերի թարգմանական-հաղորդակցական առանձնահատկությունները*) մանրակրկիտ անդրադարձ է կատարվում հատկապես փաստաթղթերի թարգմանության տեսական դրույթներին, մոտեցումներին, թարգմանական գործընթացին, ինչպես նաև առաջացող իրավական հայեցակարգային բացերին:

Իրավական թարգմանության առաջին փուլը սկզբնաղբյուր ամբողջական նյութի և կիրառված լեզվամիավորների իմաստների ընկալումն է, որին էլ հաջորդում է թիրախ լեզվի համապատասխան միավորի ընտրությունն ու նյութի ձևակերպումը:² Թարգմանական այդ բարդ գործընթացը կարող է ներկայացվել ինֆորաֆիկ գծապատկերով:³



Որպեսզի բնագրի առանձնահատկությունները լիարժեք արտահայտվեն թարգմանության մեջ, թարգմանիչը, խոսքիմաստի հետ կապված խնդիրները լուծելուց հետո, ուշադրություն պետք է դարձնի դժվարաթարգման բառաձևերին ու արտահայտություններին, լեզվական կաղապարներին ու կառույցներին: Ընդգծենք, որ եզրույթային **իմաստային համարժեքները** մեծապես պայմանավորում են թարգմանության որակը, ճշգրտությունը և բնագրին համապատասխանությունը:

¹ Ավետիսյան, Յու., Մկրտչյան, Ա., Սարգսյան, Լ. (2019). *Իրավաբանական գրագրության լեզուն*: Երևան, ԵՊՀ:

² Alkaraz, E. & Hughes, B. (2014). *Legal Translation Explained*. London: Routledge.

³ Chroma, M. (2008). *Semantic and Legal Interpretation: Two Approaches to Legal Translation. Language, Culture and the Law*. Bern: Peter Lang.

Թարգմանության գործընթացում առաջացող իրավական հայեցակարգային բացերի կամ մասնակի համարժեքների դեպքում՝ կարևոր է անդրադառնալ տվյալ խոսքի գործառական կիրառության իրավական հիմքին և այն պայմանավորող արտալեզվական գործոններին: Այսպես, օրինակ, *major* (*չափահաս*) և *minor* (*անչափահաս*) բառերը՝ երկու լեզուներում էլ կիրառվելով որպես գոյական և ածական, և *majority* (*չափահասություն*) և *minority* (*անչափահասություն*) գոյականները իրավական խոսքում հանդես են գալիս որպես տարիքային խմբեր, այդ խմբերին պատկանելություն և պատկանող անձ մատնանշող եզրույթներ, որոնց գործառական հիմքը, արտալեզվական գործոններով պայմանավորված, միշտ չէ, որ համընկնում է այլ լեզուներում սահմանված տարիքային խմբերի հետ: Այս դեպքում արդեն, բառամիավորի գործառական-հաղորդակցական իմաստը ճիշտ տարբերակելու համար, առաջ է գալիս այն համատեքստում դիտարկելու անհրաժեշտություն: Օրինակ, հայերեն իրավական համատեքստում *չափահաս* եզրույթը գործառական նշանակություն ունի, այսինքն սոցիալական և իրավական հասկացություն է: Ի տարբերություն *անչափահասի*, այն, ըստ օրենքի, մատնանշում է 18 տարեկանը լրացած, անկախ և ինքնաբավ անձի: Չափահասի սահմանումը կարող է տարբերվել՝ կախված տվյալ երկրի օրենքից, որն իր հերթին հաշվի է առնում բնորոշ սոցիալ-մշակութային և հոգեբանական տարատեսակ գործոններ: Չափահասության տարիքից ցածր անձիք *մանուկներ* կամ *երեխաներ* չեն, այլ *անչափահասներ*: Եվս մեկ արտալեզվական գործոն. քրեական պատասխանատվության, պարտադիր դպրոց չգնալու և պայմանագիր կնքելու նվազագույն տարիքը նույնպես կարող է տարբեր երկրներում տատանվել: Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի (2005) – Family Code of the Republic of Armenia (2005)* հետևյալ հոդվածը կարող է որոշակի շփոթություն առաջացնել, եթե անգլերեն թարգմանության մեջ՝ փակագծում կամ որպես տողատակի բացատրություն չնշվի չափահասության տարիքը Հայաստանում, որը չնշելը թարգմանական սխալ է:

Հոդված 50. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները

1. Ամուսնության մեջ չգտնվող *անչափահաս* ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

ARTICLE 50. RIGHTS OF THE UNMARRIED MINOR PARENTS

1. Unmarried *minor* parents have the rights to live together with their children and participate in their rearing.

Հայերեն տարբերակում, առաջին անգամ եզրույթը կիրառելիս (Հոդված 50-ում), նպատակահարմար է տողատակով ներկայացնել հետևյալ ձևակերպումը՝ *Հայաստանում/Հայաստանի Հանրապետությունում պետականորեն հաստատված չափահասության տարիքը 18-ն է*: Ակնհայտ է, որ այդ դեպքում անգլերեն թարգմանության մեջ այն կարտացոլվեր որպես *The state established legal age in Armenia/Republic of Armenia is 18*, որն էլ կապահովեր եզրույթի գործառական-հաղորդակցական իմաստը տվյալ համատեքստում:

Կարևորելով բառիմաստային մակարդակում իրավական փաստաթղթերի ճիշտ թարգմանությունը՝ անդրադառնալ *Council of Europe Convention on Access to Official Documents, 2009 – Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա, 2022* պայմանագրին: Պարբերություններն ընդգծում են այս փաստաթղթում իրար հաջորդող նոր տեղեկատվությունը, մնացած հիմնական բաժանումներն առանձնանում են մեծատառերով, վերնագրերի կամ երբեմն նախադասությունների համար՝ թավ տառատեսակով:

COUNCIL OF EUROPE CONVENTION ON ACCESS TO OFFICIAL DOCUMENTS
«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ընդհանուր առմամբ Կոնվենցիայի բառապաշարը խիստ պաշտոնական է և կանոնակարգված (*considering – հաշվի առնելով, with regard to – այս առնչությամբ, concerning the protection – պաշտպանության վերաբերյալ, efficiency – արդյունավետություն, effectiveness – էֆեկտիվություն, fosters the integrity – խթանում է ամբողջականությունը*), գրական լեզվի սահմաններում իրավաբանական և պաշտոնական խոսույթների նորմերին առավելագույնս համապատասխան՝ նպաստելով ամբողջական նյութի և դրա հատվածների իմաստային ճիշտ ընկալմանը:

Կոնվենցիայի հայերեն թարգմանության մեջ անգլերեն *thereafter–այսուհետև, սրանից հետո, այս պահից ի վեր, հետևաբար հնաբանությունը* բաց է թողնված: Բացթողումը արդարացված չէ, քանի որ առկա են համապատասխան հայերեն համարժեքները, որոնք թեև հնաբանություններ չեն, բայց կարող են նպաստել իմաստային ճշգրտությանն ու ընկալման մատչելիությանը: Կոնվենցիայի համատեքստում գերակշռում են անգլերեն հնաբանությունները. *hereto, hereafter, whereof, thereto*: Այս ոճական նշույթները կարևոր դեր են կատարում, քանի որ ծանրակշիռ խոսք ստեղծելու ներուժակ գորություն ունեն, պարտադրության իմաստ են հաղորդում փաստաթղթին, ինչպես նաև արտահայտում են հեղինակի ավանդույթներին նվիրվածություն միտումը: Թեև համընդհանուր գործածական բառերի հետ համեմատած դրանք սահմանափակ կիրառություն ունեն պայմանագրի և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակներում, այդուհանդերձ դա հիմք չէ պնդելու, թե հնաբանությունները ժամանակակից լեզվի համակարգից դուրս մղված միավորներ են, նամանավանդ, երբ դրանք ոճագործառական տեսանկյունից դիտարկում ենք որպես իրավապաշտոնական խոսքի դրսևորման ուրույն ձևեր:

Կոնվենցիայում կիրառված **հոմանիշ գույգերի՝** *provision = paragraph = article* եզրույթների հայերեն համարժեքը մեկն է՝ *հոդված, confirm = ratify* հոմանիշ գույգը հայերենում արտահայտվում է *հաստատել = վավերացնել* ձևով: *Article (Հոդված)* եզրույթի իրավական իմաստը հետևյալն է՝ *պայմանագրի կամ համաձայնագրի առանձին կետ կամ դրույթ, մինչդեռ paragraph-ը (Հոդված) իրավական տեքստը ձևավորելու տիպաբանական միջոց է, իսկ provision-ը արտահայտում է իրավական փաստաթղթի պայման: Հաստատել (confirm) և վավերացնել (ratify) գույգի իմաստային կապի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ confirm (հաստատել)*

Եզրույթը գործածվում է լայն իմաստով որպես *դիրքորոշման կամ համաձայնության պաշտոնական հաստատում*, մինչդեռ *ratify* (վավերացնել) իրավական եզրույթն արդեն մատնանշում է *հաստատված պայմանագրի վավերականացումը՝ կողմ քվեարկելու կամ ստորագրելությամբ հաստատելու միջոցով*: Հայերեն համարժեքները ճշգրտորեն արտացոլում են նշված եզրույթների իմաստային տարբերությունները: Գոնվենցիայի համատեքստում բազմաթիվ են նաև այլ հոմանիշ բայական գույգերը՝ *perform = exercise = execute – կատարել, ապահովել* կամ *իրականացնել*, ինչպես նաև հոմանիշ գոյականական գույգերը՝ *application = fulfillment – կիրառում* կամ *կատարում*, *aim or purpose – նպատակ*, *safety = security = protection – անվտանգություն* կամ *պաշտպանություն*: Ավելացնենք, որ Գոնվենցիայում կիրառվել են նաև **հականիշ գույգեր**, որոնց իմաստային ազդեցությունը ևս մեծ է համատեքստի վրա: Հականիշ գույգերը (*in whole = wholly # in part – լրիվ = ամբողջական # մասնակի*, *request # refusal – խնդրանք # մերժում*) ևս նպաստում են իմաստաբանական խնդիրների ճիշտ լուծմանը և համատեքստը զերծ պահում երկիմաստությունից և թյուրըմբռնումներից:

Փորձելով բացահայտել իրավական փաստաթղթերում կիրառվող ամենակայուն բառաշերտի՝ **եզրույթների** գործառական և իմաստաբանական առանձնահատկությունները, դիտարկենք *United Nations Convention on Contracts for the International Sale of Goods (2010)* պայմանագիրն ու դրա հայերեն թարգմանությունը՝ *Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիա (2010)*:

United Nations Convention on Contracts for the International Sale of Goods

PREAMBLE

The States Parties to this Convention,

Bearing in mind the broad objectives in the resolutions adopted by the sixth special session of the General Assembly of the United Nations on the establishment of a New International Economic Order,

*Considering that the development of **international trade** on this basis of equality and mutual benefit is an important element in promoting friendly relations among States,*

*Bearing of the opinion that the adoption of **uniform rules** which govern **contracts** for the **international sale of goods** and take into account the different social, economic and **legal systems** would contribute to the removal of **legal barriers** in **international trade** and promote the development of **international trade**,*

Have agreed as follows:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն **Գոնվենցիայի** մասնակից պետությունները,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի վեցերորդ հաստիկ նստաշրջանում ընդունված նոր միջազգային **տնտեսական կարգ** հաստատելու վերաբերյալ բանաձևերի ընդհանուր նպատակները,

համարելով, որ հավասարության և փոխշահավետության հիման վրա **միջազգային առևտրի** զարգացումը կարևոր տարր է պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման գործում, ենթադրելով, որ **ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերը** կարգավորող և տարբեր հասարակական, տնտեսական և **իրավական համակարգերը** հաշվի առնող **միասնական նորմերի** ընդունումը կնպաստի **միջազգային առևտրում իրավական խոչընդոտների** վերացմանը և կաջակցի **միջազգային առևտրի** զարգացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

Ակնհայտ է, որ վերոնշյալ համատեքստերում խստորեն պահպանվել են ինչպես իրավաբանական խոսույթին, այնպես էլ իրավական փաստաթղթերին բնորոշ բառիմաստային, շարահյուսական (գուգահեռ կառույցներ, դերբայական կառույցներ) և կետադրական նորմերը: Պայմանագրի վերոնշյալ հատվածի ձևավորումը նույնպես համապատասխանում է իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթների պահանջներին: Հենց այս պայմանագրին բնորոշ կարևոր եզրույթներն ու եզրույթային կապակցությունները (*Convention – Կոնվենցիա, Economic Order – տնտեսական կարգ, international trade – միջազգային առևտուր, uniform rules – միասնական նորմեր, contracts – պայմանագրեր, international sale of goods – ապրանքների միջազգային առուվաճառք, legal systems – իրավական համակարգեր, legal barriers – իրավական խոչընդոտներ*) ճշգրիտ են և մենիմաստ: Նշված ոճական նշույթները գործառական կարևոր դեր և նշանակություն ունեն և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակներում, ինչպես նաև մատչելի են հասարակությանը և չեն «դժվարացնում իրավանորմերի ճիշտ ընկալումը»:¹ Որոշ երկրմասն է առաջացնում տվյալ պայմանագրի համար առանցքային նշանակություն ունեցող և տվյալ համատեքստում որպես եզրույթ կիրառվող *առուվաճառք (trade)* բառային միավորը: Հետաքրքրական է, որ ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում տրվում են միայն նշված եզրույթի *առևտուր, առուծախ, տուրևառ* ձևերը (Աղայան, Սաքապետոյան), և միայն Ս. Էլոյանի նորաբանությունների բառարանն է տալիս *առքուվաճառք* ձևը որպես տնտեսական եզրույթ: Փաստական նյութի հիման վրա կատարած մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս (հայալեզու պայմանագրերում մասնավորապես) կիրառվում է *առուվաճառք* ձևը, թեև այն որպես նորաբանություն դեռևս գրանցված չէ որևէ բառարանում: Ինչ վերաբերում է *կոնվենցիա* եզրույթին, թեև ունենք դրա հայերեն համարժեքը *պայմանագիր, համաձայնագիր*, այնուամենայնիվ կոնկրետ միջազգային փաստաթղթերի դեպքում կիրառվում է միայն *կոնվենցիա* եզրույթը: Այս դեպքում կարող ենք ասել, որ փոխառված եզրույթը լիովին հասկանալի է, երկարաշունչ չէ և կիրառական մեծ ակտիվություն է դրսևորում միջազգային պայմանագրերում:

Շարահյուսական միավորները՝ հատկապես վերասույթային միասնությունների կազմում հանդես եկող **բարդ նախադասությունները, կրավորական և դերբայական կառույցները**, մեծ դեր են կատարում իրավական պաշտոնական փաստաթղթերի

¹ Ղաբսյան, Ա. (2022). *Արդի հայերենի իրավաբանական տերմինները*: Երևան, Լուսակն, էջ 7:

ձևակերպման և դրանց թարգմանական խնդիրների լուծման գործում: Նշված կառույցների գործածությունը պաշտոնական փաստաթղթերում պարտադիր պայման է, երբ անհրաժեշտություն կա խոսքը դարձնելու բազմաբովանդակ և տեղեկություններով հագեցած: Ակնհայտ է, որ թարգմանիչը պետք է ծանոթ լինի շարահյուսական կառույցների կազմության բոլոր տեսակներին և ձևերին, որպեսզի նախ՝ ընկալի անգլերեն ասույթների իմաստը, ապա՝ ճշգրիտ ներկայացնի այն հայերեն թարգմանության մեջ:

***Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms
Rome, 4.XI.1950***

*Being resolved, as the governments of European countries **which** are like-minded **and** have a common heritage of political traditions, ideals, freedom and the rule of law, to take the first steps for the collective enforcement of certain of the rights stated in the Universal Declaration,*

Have agreed as follows:

Վերոնշյալ համատեքստում թեև բարդ նախադասության ենթական բացահայտ չի նշվում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ այն արտահայտվում է *եվրոպական երկրների կառավարություններ* (*governments of European countries*) կապակցությամբ, քանի որ նախադասությունն ընդհանուր առմամբ վերաբերում է այդ կառավարությունների գործունեությանն ու դրանց կողմից ընդունած որոշումներին: Որոշիչ երկրորդական նախադասությունը (*which are like-minded and have a common heritage of political traditions, ideals, freedom and the rule of law*) լրացնում է գլխավոր նախադասության ներակա կերպով արտահայտված ենթակային: Երկրորդական նախադասությունը շարահյուսորեն կախված է գլխավոր նախադասությունից և լրացնում է նրան ստորադասական շաղկապի միջոցով: Երկրորդական նախադասությունը գտնվում է միջադաս դիրքում: *Being resolved **դերբայական կառույց*** ամբողջ նախադասությունը ներկայացնելու գործառնություն է իրացնում և տվյալ համատեքստում ցույց է տալիս, որ եվրոպական երկրների կառույցները որոշում ընդունելու իրավասություն ունեն և վճռական են ընդունելու այն: Դերբայական կառույցը ներմուծում է ամբողջ նախադասության գլխավոր իմաստը, որն էլ նշված կառավարությունների կողմից պարտադրաբար կատարվելիք համընդհանուր հռչակագրի դրույթների իրագործումն է: Նախադասության պարզեցված տարբերակը այս տեսքը կունենար *The governments of European countries, which share similar ideals and traditions, have agreed to start working together to enforce certain rights from the Universal Declaration.*

ԳՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

(4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ)

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքների և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին

քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին, համաձայնեցին ներքոհիշյալի հետ.

Հայերեն տարբերակը դերբայական դարձվածով պարզ նախադասություն է, որում համադաս որոշիչները կապակցված են *և* համադասական շաղկապով: Այստեղ ևս դերբայական դարձվածը հանդես է գալիս առաջադաս դիրքում: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում դերբայական դարձվածով կառույցները պաշտոնական խոսքի առանցքն են: Եթե նպատակ կա բուն գործողությանը զուգահեռ ներկայացնելու զուգընթաց գործողություն(ներ), ապա դերբայական դարձվածը հարմար, նույնիսկ անփոխարինելի միջոց է՝ խոսքը դարձնելով սեղմ, ասելիքը՝ ավելի համապարփակ: Այդ է վկայում պայմանագրի նախաբանի հաջորդ կետերում գործածված *նկատի ունենալով, կրկին հավաստելով* դերբայական դարձվածների բազմակի կիրառությունը: Հայերեն թարգմանությունը և՛ շարադասության, և՛ բառերի ընտրության առումով կարելի է հաջողված համարել, սակայն անդրադառնալով խորագրի շարադասությանը, չենք կարող չնշել, որ *ԿՈՆՎԵՆՏԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ* խորագրում *կոնվենցիա* բառը նպատակահարմար կլիներ դնել վերջում՝ *ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱ*: Եթե այս բառի՝ նախադասության սկզբում դնելու նպատակը փաստաթուղթը որպես պայմանագրի շեշտելն է, ապա կարելի էր նույն շարադասությունը կիրառել՝ *Կոնվենցիա* բառը գրաֆիկորեն առանձնացնելով առաջին տողում, իսկ հաջորդող ասույթը տալ նոր տողից.

ԿՈՆՎԵՆՏԻԱ

*ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ*

Նշենք, որ հատվածի անգլերեն տարբերակը պարունակում է 61 բառ, իսկ հայերենը՝ 45: Այս փաստը կարելի է բացատրել անգլերենի և հայերենի ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններով (հայերենը թեքական լեզու է, իսկ անգլերենը՝ վերլուծական) ինչպես նաև բարդ նախադասությունների կազմության տարբեր ձևերով:

Հապավումների գործածությունը ինչպես իրավաբանական, այնպես էլ պաշտոնական խոսույթի հատկանիշն է: Ընդհանրապես, երկու դեպքում էլ հապավումների թարգմանությունը չափազանց բարդ գործընթաց է, և թարգմանիչը բախվում է որոշակի խնդիրների թե՛ հայերենից անգլերեն թարգմանելիս, և թե՛ անգլերենից՝ հայերեն: Բնականաբար, առաջնային կարևորություն է ստանում իրավական լեզվի գրագիտությունը, քանի որ հապավման ոչ ճշգրիտ կամ սխալ թարգմանությունը կարող է փոխել սկզբնաղբյուր բառի նշանակությունը և ընթերցողի մոտ շփոթմունք առաջացնել: Ավելին, փաստաթուղթը կարող է համարվել անվավեր:


Ներկայացնենք բառերի բաշխման և համադրման Word_results.txt կորպուսային վերլուծության արդյունքները:

Type/ Token	Lemma/ Headword	Rank	Frequency	Range	NormFreq
cjsc	1	5	1	228.812	1
str	1	8	1	366.099	1
sarl	1	3	1	137.287	1
llc	1	6	1	274.574	1
cg	1	7	1	320.337	1
aen	1	23	1	1052.535	1
Amd	1	24	1	1098.298	1
Hsbc	1	1	1	45.762	1
Usd	1	24	1	1098.298	1
Psrc	1	1	1	45.762	1
vat	1	4	1	183.050	1
c	1	39	1	1784.734	1
Oecd	1	1	1	45.762	1
hh	1	4	1	183.050	1
hէց	1	11	1	503.386	1
ամն	1	4	1	183.050	1

Գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրի ամերիկյան Մի - Ջի Սոյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի (Մի-Ջի Սոյուշնս էլ-էլ-սի) սահմանափակ պատասխանատվության ընկերության, լյուքսեմբուրգյան Քոնթուր Գլոբալ Տերրա Հոլդինգ Էս-Ա-էր-էլ (Քոնթուր Գլոբալ) բաժնետիրական ընկերության և հայաստանյան Որոտանի Հիդրոէլեկտրակայանների համալիր և Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված (*Asset Purchase Agreement, 2015 – Գույքի առքուվաճառքի պայմանագիր, 2015*) 127 էջանոց, զուգահեռաբար և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակները ներկայացնող պայմանագրի կորպուսային հետազոտությունը ցույց է տալիս, որ անգլերեն տարբերակում *LLC (limited liability company)* հապավումը ամբողջապես ներկայացվել է ընկերության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելիս, մինչդեռ հայերեն համարժեք հապավման՝ *ՄՊԸ (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն)* անվան մեջ ընդհանրապես չի արտացոլվել, իսկ պայմանագրի մեջ ներկայացվել է անգլերենի տառադարձամբ՝ *Էլ – Էլ – Մի*: Առաջին հայացքից կարող

է թվալ, որ սա բացթողում է, կոպիտ թարգմանական սխալ, քանի որ գոյություն ունի հայերենում ամրագրված *ՄՊԸ* տարբերակը: Այդուհանդերձ, իրավական հապավումների համարժեք թարգմանության դեպքում տառադարձման և տեղայնացման միջև ընտրությունը միշտ չէ, որ միանշանակ է իրավական համատեքստում, և *LLC*-ն հայերեն *ՄՊԸ*-ի փոխարեն անգլերենի տառադարձմամբ թարգմանելը լիովին արդարացված է: Բանն այն է, որ *LLC* և *Ltd* հապավումների բովանդակային տարբերությունը իրավական կարգավիճակի տեսանկյունից նույնը չէ: *LLC (Limited Liability Company)*՝ իրավաբանական կառույց է, որն առավել տարածված է ԱՄՆ-ում, համատեղում է կորպորացիան և մասնավոր ձեռնարկատիրությունը, չի համարվում բաժնետիրական ընկերություն և ունի մասնավոր կարգավիճակ: *Ltd-ն (Private Limited Company)*՝ ընկերության տեսակ է, որն առավել տարածված է Միացյալ Թագավորությունում, Ավստրալիայում, Հնդկաստանում և, ըստ բրիտանական առևտրային իրավունքի, նախատեսված է սահմանափակ պատասխանատվությամբ բաժնետերերի համար: Հայաստանի օրենսդրական դաշտում նշված երկու ընկերությունների անվանումներն էլ համարժեքվում են *ՄՊԸ (Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն)* կարգավիճակին: Այսինքն՝ իրավաբանական համարժեքության առումով սխալ չկա, սակայն կազմակերպչական կառուցվածքային բոլոր երանգներն ամբողջությամբ չեն արտացոլվում հայերեն համարժեքում, որի պատճառն էլ *Էլ-Էլ-Սի* տառադարձման կիրառությունն է: Տվյալ կիրառությունը լիովին արդարացված է, քանի որ պայմանագիրը հստակ իրավական նշանակություն ունի օտարերկրյա կողմի համար: Ընկերության անվանումը բրենդային է և գրանցված է այդ ձևով, որը նշանակում է, որ թարգմանական միջամտությունը նպատակահարմար չէ և տառադարձումն արդարացված է, քանի որ ընկերության իրավական կարգավիճակը բնօրինակին համարժեք է: Ինչ վերաբերում է լյուքսեմբուրգյան *ContourGlobal Terra Holding SARL* (ֆրանս. *société à responsabilité limitée*) բաժնետիրական ընկերությանը, հայերեն տարբերակում՝ *Էս - Ս - Էր - Էլ* տառադարձմամբ ներկայացվել է համապատասխան ֆրանսերեն հապավումը: Նպատակահարմար կլիներ այս դեպքում կիրառել հայերենի *ՄՊԸ* հապավումը, որը լիովին մատչելի կլիներ պայմանագրի հայկական կողմին: Վերոնշյալ պայմանագրում հապավումների կիրառման թերացումների շտկումը մեծապես պայմանավորված է թարգմանության գերժամանակակից տեխնոլոգիական գործիքների կիրառմամբ: Անընդմեջ նորացվող AntConc կորպուս գործիքի միջոցով կատարված վերլուծության պատկերը հետևյալն է.

**Հայերեն և անգլերեն հապավումների հարաբերակցությունը
ըստ N-Gram_results.txt աղյուսակի**



Կորպուսային վերլուծության արդյունքները ցույց են տալիս հայերեն և անգլերեն հապավումների կիրառության անհամարժեք համամասնություն՝ 7 (հայերեն) և 61 (անգլերեն), որը նշանակում է, որ հապավումների թարգմանության առումով առկա են լեզվական և տեխնոլոգիական թերություններ և թարգմանական խնդիրներ: Անգլերեն հապավումների դեպքում արդեն կիրառվում են տեղական և միջազգային իրավական հապավումների կանոնակարգված և համակարգչավորված տվյալների հսկայածավալ կորպուսներ, մինչդեռ հայերենում տվյալների բազան չափազանց փոքր է և գրեթե չի թարմացվում, որն էլ իր հերթին չի նպաստում թարգմանական խնդիրների գրագետ լուծումներին և դրանց գործնական կիրառմանը: Հայերեն կորպուսների հետագա զարգացումը թույլ կտա մեծապես բարելավել թարգմանության որակը և կնպաստի մեր երկրի համար կարևոր դեր կատարող միջազգային պայմանագրերի և փաստաթղթերի ճշգրիտ թարգմանությանը:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները.

- Իրավական փաստաթղթերը իրենց մզգիտակարգային բնույթի շնորհիվ հարում են ինչպես իրավաբանական, այնպես էլ պաշտոնական-գործարար խոսույթներին:
- Պայմանագրային եզրույթները խոսքի ճշգրտությունն ապահովող ոճական նշույթներ են, ուստի անհրաժեշտ է տարբերակել կազմությամբ նման, բայց իմաստով նույնիսկ չնչին տարբերություն ունեցող եզրույթների ընտրությունը, որոշակի իրադրություններում փոխառված եզրույթին զուգահեռ նշել հայերեն համարժեքը, չգործածել փոխառված եզրույթը, եթե հայերեն համարժեքը պարզորոշ արտահայտում է միևնույն հասկացական իմաստը:
- Ինչպես փոխակերպված, այնպես էլ չփոխակերպված կրավորական սեռի կառույցների գործածությունը խիստ կարևոր նախապայման է իրավաբանական փաստաթղթերի շարահյուսական կառույցը հստակ և մատչելի ձևակերպելու և թարգմանելու գործում:
- Բնօրինակի բարդ ստորադասական կառույցները հիմնականում պահպանվում են թարգմանության մեջ:
- Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում դերբայական դարձվածով կառույցները պաշտոնական խոսքի առանցքն են և կիրառվում են բուն գործողությանը զուգահեռ զուգընթաց գործողություն(ներ) ներկայացնելու նպատակով:
- Կորպուսային հետազոտությունը փաստում է, որ հապավումների թարգմանության գործընթացում առկա են թարգմանական խնդիրներ, քանի որ, եթե անգլերեն հապավումների դեպքում կիրառվում են տեղական և միջազգային իրավական հապավումների կանոնակարգված և համակարգչավորված տվյալների հսկայածավալ կորպուսներ, ապա հայերենում տվյալների բազան չափազանց փոքր է և գրեթե չի թարմացվում:

**Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ
հրապարակումներում.**

1. Problems of Semantic Translation of Legal Documents from Functional Communicative Perspective. *Foreign Languages for Special Purposes*, 12/31 (1-2), Yerevan: YSU, 2022, 187-195. DOI: <http://doi.org/10.46991/flsp.v20i1-2>
2. Կրավական սեռի կառույցների գործառական-հաղորդիցական արժեքը ՀՀ Հնտանեկան Օրենսգրքի անգլերեն և հայերեն տարբերակներում: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 27/1 (34), Երևան, ԵՊՀ, 2023, 58-66. DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2023.27.1.058>
3. Some Linguostylistic Properties of Council of Europe Convention on Access to Official Documents and its Armenian Translation. *Foreign Languages for Special Purposes*, 2/22, Yerevan: YSU, 2023, 23-29. DOI: <https://doi.org/10.46991/FLSP.2023.22.068>
4. Եզրույթների գործառական դերն ու կիրառությունը անգլերեն իրավական պայմանագրերում և դրանց հայերեն թարգմանություններում: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 27/2 (35), Երևան, ԵՊՀ, 2023, 58-66. DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2023.27.2.071>
5. Բարդ նախադասությունների կիրառությունը և դրանց հայերեն թարգմանությունը միջազգային պայմանագրերում: *Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար*, 1-2(23), Երևան, ԵՊՀ, 2024, 183-209 . DOI: <http://doi.org/10.46991/flsp.v20i1-2>
6. Հապավումների գործածությունն իրավական պայմանագրերում և դրանց հայերեն թարգմանությունը. կորպուսային վերլուծություն: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 28/2 (37), Երևան: ԵՊՀ, 2024, 80-96. DOI: <https://doi.org/10.46991/FLHE.2024.28.2>

Varduhi Gagik Mirijanyan
Translation of Legal Documents from a Functional-Communicative Perspective
Summary

The present dissertation examines the **sphere** of legal discourse, focusing specifically on legal documents as an **object of study** within legal and official discourses. Particular attention is given to international contracts in English, analyzed in parallel with their Armenian versions, with the aim of identifying linguistic markers, translation challenges and clarifying relevant issues.

The **relevance** of the research stems from the pivotal role played by official documents in regulating domestic and international relations in contemporary society. The scientific **novelty** of the dissertation lies in the accurate analysis, interpretation and precise translation of linguistic units encountered in legal documents and treaties. This analysis takes into account not only linguistic features but also the broader extralinguistic context. Moreover, the attempt to treat legal documents as a functional variety of legal and official discourse, examined across all levels of linguistic expression, represents a new, complex, and promising approach.

The **empirical basis** of the research (amounting to more than 1,000 pages) consists primarily of English and Armenian versions of international treaties ratified by the Republic of Armenia.

To analyze this material, the study employs a range of **methods**: analytical research, qualitative and quantitative analysis, stylistic analysis, corpus analysis (using the AntConc tool), and comparative case study. The latter also incorporates semantic and structural methods of analysis at the lexical, morphological, and syntactic levels.

The **aim** of the dissertation is to investigate and reveal the stylistic, functional, and translational features of legal documents – particularly treaties – within the framework of legal linguistics.

To achieve this aim, the following **objectives** are pursued:

1. to determine the place and role of legal official documents within the system of functional styles;
2. to identify its translation problems and communicative-functional characteristics;
3. to examine and compare the semantic features of words and terms in legal documents and their Armenian translations;
4. to conduct a comparative analysis of syntactic complexities (including sentences, participial constructions, and passive structures) in the English and Armenian versions of the same treaties;
5. to carry out a small-scale corpus study assessing the equivalent use of abbreviations in both versions of international treaties.

The **theoretical value** of the research lies in further expansion and development of the field, introduction of new ideas and theories, new methods and forms of examining the documented material, conditioned by exploration of the linguistic, extralinguistic, stylistic, translational, and communicative features of legal documents, while treating them as a discursive process governed by specific legal and official norms. In today's world,

international communication in the legal sphere through English is both inevitable and indispensable. From this perspective, the present study has potential **practical value**, offering its useful applications in legal linguistics, language culture, communication theory, and functional stylistics, as well as in the practice of English language teaching.

Вардуи Гагиковна Мириджанян

Перевод юридических документов с функционально-коммуникативной позиции

Резюме

Предмет исследования диссертации является юридические документы в системе правового и официального дискурсов. **Объектом** исследования являются стилистические, функциональные и переводческие особенности международных договоров на английском языке в сопоставлении с их армянскими версиями.

Актуальность диссертационного исследования определяется возрастающей ролью официальных юридических документов в регулировании внутригосударственных и международных отношений в условиях современного общества. Международные договоры и соглашения, выступая важнейшими средствами правового регулирования, требуют тщательного анализа их языковой специфики и проблем перевода.

Научная новизна диссертации состоит в комплексном подходе к анализу юридических документов как разновидности официального и правового дискурсов. Новым является сочетание лингвистического и экстралингвистического анализа, а также системное рассмотрение языковых единиц на всех уровнях выражения при сопоставлении английских и армянских версий международных договоров.

Эмпирическую базу исследования составляют английские и армянские версии международных договоров, ратифицированных Республикой Армения, общим объёмом более 1000 страниц. В работе применяются аналитический **метод**, качественный и количественный анализ, стилистический анализ, корпусный анализ (с использованием программы *AntConc*), а также сравнительное кейс-исследование, включающее семантический и структурный анализ на лексическом, морфологическом и синтаксическом уровнях.

Цель исследования заключается в выявлении и анализе стилистических, функциональных и переводческих характеристик юридических документов – преимущественно международных договоров – в рамках юридической лингвистики. Для достижения поставленной цели предусматривается решение следующих **задач**:

1. определить место и роль официальных юридических документов в системе функциональных стилей;
2. выявить основные проблемы перевода и коммуникативно-функциональные особенности юридических текстов;
3. исследовать семантические особенности слов и терминов в юридических документах и их армянских переводах;

4. провести сопоставительный анализ синтаксических структур (предложений, причастных конструкций, пассивных форм) в английских и армянских версиях одних и тех же договоров;
5. осуществить корпусное исследование эквивалентного использования аббревиатур в английских и армянских версиях международных договоров.

Теоретическая значимость работы определяет дальнейшее расширение и развитие направления, внедрение новых идей и теорий, новых методов и форм исследования материала. Именно этот подход определяет теоретическую ценность нашего исследования: изучение лингвистических, экстралингвистических, стилистических, переводческих и коммуникативных особенностей юридических документов, рассмотрение юридических документов как дискурсивного процесса, регулируемого определенными закономерностями, выявлением и систематизацией лингвистических, экстралингвистических, стилистических, переводческих и коммуникативных особенностей юридических документов, рассматриваемых как дискурсивный процесс, регулируемый нормами официального и правового общения.

Практическая значимость диссертационной работы обусловлена объективной необходимостью международного правового общения посредством английского языка. Полученные результаты могут быть использованы в юридической лингвистике, культуре речи, теории коммуникации, функциональной стилистике, а также в практике преподавания английского языка.

